ԿԱՐԾԻՔ

Վիրաբ Ալբերտի Վարդանյանի

«Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրականացման հիմնախնդիրները սահմանադրական նոր կարգավորումների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում» թեմայով ԺԲ.00.02. - «Հանրային իրավունք» - (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 22-րդ կետի համաձայն պաշտոնական ընդդիմախոսը, ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հրատարակված աշխատանքները, գնահատում է ատենախոսության թեմայի արդիականությունը, գիտական դրույթների և եզրահանգումների ճշտությունը, նորությունը և հիմնավորման աստիճանը, ատենախոսության համապատասխանությունը նշված կանոնակարգի 7-րդ կետին:

Վիրաբ Ալբերտի Վարդանյանի՝ «Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրականացման հիմնախնդիրները սահմանադրական նոր կարգավորումների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը նվիրված է սահմանադրաիրավական երկու սկզբունքների՝ մեղքի և պատժի համաչափության սահմանադրականացման հիմնախնդիրների և սահմանադրաիրավական բովանդակության ուսումնասիրությանն ու հետազոտությանը:

Ատենախոսության թեման ունի և՛ տեսական, և՛ գործնական արդիականություն: Թեմայի հետազոտման տեսագործնական հրատապությունը

կարևորվեց հատկապես Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների պայմաններում: Այդ փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 71-րդ հոդվածում ամրագրվեցին մեղքի և պատժի համաչափության սկզբունքները: Առաջացավ այդ սահմանադրական սկզբունքների էության ու սահմանադրական բովանդակության բացահայտման, դրանց կիրառման ու ուսումնասիրության միջազգային փորձի իմաստավորման, դրանց սահմանադրական ամրագրման արդյունքում երկրի իրավական համակարգի վրա ազդեցությունները և կոնկրետ հետևանքները վեր հանելու, իրավական համակարգի զարգացման հնարավորությունները բացահայտելու անհրաժեշտությունը:

Պետք է նշել, որ հեղինակը հիմնավորել է ընտրված թեմայի արդիականությունը մի քանի առումներով. մեր իրականության մեջ թեմայի հետազոտության անհրաժեշտությամբ, հետազոտման առարկայի կարևորությամբ ու հրատապությամբ, ինչպես նաև գիտագործնական մի շարք խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

Թեկնածուական սույն ատենախոսության դրույթներին ու եզրահանգումներին բնորոշ է ճշտությունը, այսինքն՝ ներկայացված հետազոտությունն արտացոլում է ատենախոսության թեմայի հետազոտության առարկայի շրջանակում ներառված օբյեկտիվ իրավական իրականությունը: Հեղինակն ատենախոսության շարադրման հիմքում դրել է համապատասխան նորմատիվ և անհատական իրավական ակտերը: Հետազոտական ամեն մի խնդիր ուսումնասիրելիս լուսաբանված են ոչ միայն տվյալ հիմնահարցի հիմք հանդիսացող տեսական աղբյուրները, նորմատիվ ակտերը, այլև դրանց կիրառման պրակտիկան, սոցիալական-իրավական հետևանքները: Այսպիսի մոտեցումը հնարավորություն է տվել հեղինակին խուսափելու միայն օրենսդրության վերլուծությունից, բացահայտել և վերլուծել հետազոտական խնդիրը համալիր կերպով:

Այսպես, հեղինակի կողմից առաջին գլխում քննարկման առարկա է դարձել մեղքի և պատժի համաչափության սկզբունքների առաջնային բաղադրատարրեր

հանդիսացող «մեղք» և «պատիժ» հասկացությունները, դրանց պատմահրավական և պատմափիլիսոփայական վերլուծությունը: Դրան հետևել է մեղքի և պատժի համաչափության սկզբունքների ապահովման, դրանց սահմանադրականացման նախադրյալների, սահմանադրահրավական բովանդակության բացահայտման, իրավունքի տարբեր ճյուղերում դրանց մեկնաբանման ու իրավահասկացողության առնչությամբ կատարված հետազոտությունը:

Աշխատանքի երրորդ գլխում հեղինակը հետազոտության առարկա է դարձրել մեղքի սկզբունքին և պատժի համաչափության սկզբունքին առնչվող միջազգային փորձը, ուսումնասիրության ենթարկելով մի շարք եվրոպական իրավական փաստաթղթեր խնդրո առարկա հարցի վերաբերյալ առաջ է քաշել մի քանի եվրոպական իրավական չափորոշիչներ:

Ատենախոսության եզրահանգումներին ու պաշտպանության ներկայացված դրույթներին բնորոշ են գիտական նորույթի տարրեր: Անհրաժեշտ է փաստել, որ պաշտպանության ներկայացված դրույթների, հետազոտության արդյունքների և կատարված եզրահանգումների շնորհիվ հեղինակը կարողացել է տրամաբանական հաջորդականությամբ ներկայացնել ատենախոսության ամբողջ նյութը՝ հիմնահարցերը, դատողությունները, հիմնադրույթները, եզրահանգումները և այլն: Արժեքավոր են հեղինակի՝ հատկապես, մեղքի և պատժի համաչափության սկզբունքների տարածական մեկնաբանության հնարավորության բացահայտումն ու հիմնավորումը, նշված իրավական սկզբունքների առանձին բնութագրիչների ու հատկանիշների վեր հանումը, ինչպես նաև դրանց առնչվող եվրոպական իրավական չափորոշիչների համակարգված բացահայտումը:

Իհարկե վերոշարադրյալից զատ, պետք է նկատել որ աշխատանքում տեղ գտած որոշ պնդումներ ու դատողություններ վիճելի են, սակայն այնուամենայնիվ հանդիսանում են գիտական հետազոտության արդյունք և ուղեկցվում են գիտական տարբեր հիմնավորումներով:

Ատենախոսությունն ունի ավարտուն տեսք և անկասկած հանդիսանում է հստակ շարադրված գիտավերլուծական աշխատություն: Հեղինակի կողմից պաշտպանության ներկայացված դրույթները բնորոշվում են յուրահատկությամբ, ինքնատիպությամբ և, անշուշտ, իրենցից ներկայացնում են գիտական արժեք:

Աշխատության մեջ հստակ դրված են հետազոտման ենթակա հարցադրումները, որոնք տրամաբանական հաջորդականությամբ, գիտական վերլուծական հետազոտությունների արդյունքում հանգում են կոնկրետ դատողությունների ու եզրահանգումների՝ պահպանելով մտքերի պատճառահետևանքային կապը:

Թեկնածուական ատենախոսության եզրահանգումներն հիմնավորված են, այսինքն՝ առաջադրված հետազոտական խնդիրները և եզրակացությունները ներկայացված են հիմնավոր փաստարկների միջոցով, եզրահանգումների հիմնական մասի հիմքում ընկած են հստակ աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքեր:

Ատենախոսության տեքստը շարադրված է գրագետ և համակարգված: Ատենախոսության կառուցվածքը համապատասխանում է ատենախոսության առջև դրված խնդիրներին ու նպատակներին, ինչը ապահովել է հետազոտության ամբողջականությունը: Հարցադրումները կատարված են հստակ՝ նախևառաջ վեր հանելով առկա տեսագործնական խնդիրները, այնուհետև՝ համապատասխան վերլուծությունների արդյունքում դրանց տալով կոնկրետ լուծումներ կամ կատարելով կոնկրետ դատողություններ և եզրահանգումներ:

Այնուհանդերձ հարկ է նկատել, որ հեղինակի դատողություններն առավել համոզիչ կլինեին, եթե թեմայի շրջանակներում քննարկվող որոշ հիմնահարցերի լուծման առնչությամբ արված դատողությունների հիմքում դրվեին առավել հստակ օրենսդրական կառուցակարգեր՝ ի ապահովումն քննարկվող երկու սկզբունքների:

Հեղինակի կողմից ուսումնասիրել են հայրենական և արտասահմանյան համարժեք մասնագիտական գրականություն, այդ թվում՝ տեսական գրականություն, մենագրություններ, գիտական հոդվածներ, զեկույցներ, նորմատիվ իրավական ակտեր, դատական ակտեր: Կատարվել են հղումներ նաև

էլեկտրոնային ռեսուրսների վրա: Արդյունքում հեղինակը դրսևորել է թեմային վերաբերող տեսական աղբյուրների պատշաճ տեղեկացվածության մակարդակ, դրանցից օգտվելու և համապատասխան վերլուծություններ կատարելու անհրաժեշտ ունակություններ: Հեղինակին, ընդհանուր առմամբ, հաջողվել է զերծ մնալ խրթին ու բազմաբովանդակ մտքերից ու արտահայտություններից և ցուցաբերել ինքնատիպություն:

Միևնույն ժամանակ, աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից, որոնց կապակցությամբ ստորև ներկայացնվում են հետևյալ նկատառումները.

1. Աշխատության առաջին ենթագլխում անդրադարձ է կատարվել «մեղք» և «պատիժ» հասկացություններին: Ուսումնասիրվել է դրանց էությունը, որպես իրավական կատեգորիաների՝ դրանց զարգացման էվոլուցիան, առաջ են քաշվել դրանց պատմահրավական և պատմափիլիսոփայական զարգացման առանձին փուլեր և այլն: Սակայն, հեղինակի կողմից առաջ քաշված թվով 7 փուլերը միմյանցից չեն սահմանազատվում կոնկրետ ժամանակաշրջաններով կամ ժամանակագրական այս կամ այն ուղենշով, մինչդեռ դրա առկայության պայմաններում հեղինակի կողմից «մեղք» և «պատժ» հասկացությունների պատմահրավական և պատմափիլիսոփայական զարգացման առանձին փուլերի առաջ քաշումը կլիներ ավելի որոշակի և հիմնավոր:

2. Հարկավոր էր եղածից ավելի մեծ ուշադրություն դարձնել Սահմանադրական դատարանի դերին՝ առհասարակ յուրաքանչյուր սահմանադրական սկզբունքի, այդ թվում՝ մեղքի և պատժի համաչափության կենսագործմանը նպաստելու հարցում: Գուցե արվեր կոնկրետ առաջարկներ, որոնք կնպաստեին Սահմանադրական դատարանին վերապահված լիազորությունների շրջանակներում գործնականում էլ ավելի մեծացնելու սահմանադրական սկզբունքների գործարկումը:

3. Աշխատանքն ավելի կշահեր, եթե պատասխանատվության մասին խոսելիս, դրա ընթացքում մեղքի և պատժի համաչափության սկզբունքների ապահովման անհրաժեշտությունը և դրա առանձնահատկությունները քննարկելիս փոքր-ինչ մանրամասն նշվեր թե պատասխանատվության ո՞ր

ինստիտուտների մասին առհասարակ կարող է խոսք լինել, և որի դեպքում ի՞նչ առանձնահատկություններ կարող են ի հայտ գալ:

4. Աշխատանքի նպատակներին առավելագույնս հասնելու տեսանկյունից ավելի նպաստավոր կլիներ, եթե պաշտպանության ներկայացվող 5-րդ դրույթում՝ ի ապահովումն հեղինակի կողմից նշված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պահպանման ու կենսագործման համար իրական և լիարժեք սահմանադրական երաշխիքների, օրենսդրության մշակման ու կատարելագործման, իրավական համակարգերում առկա խնդիրների լուծման՝ հեղինակի կողմից արվեր կոնկրետ օրենսդրական փոփոխություններին նվիրված առաջարկություններ, առավել մանրամասն մատնանշվեր թե ինչ խնդիրներ են առկա օրենսդրադրական դաշտում, որոնք խաչնդոտում են քննարկվող սկզբունքների կենսագործմանը և որոնք են դրանց լուծման ճանապարհներն օրենսդրական փոփոխությունների տեսանկյունից:

5. Հեղինակին չի հաջողվել ամբողջությամբ զերծ մնար օտարածին տերմիններից, որոնք նկատվում են աշխատության տարբեր ենթագլուխներում, սակայն կարծում ենք, որ դրանց կիրառումը երբեմն արդարացված է, քանի որ հայերեն մասնագիտական գրականության մեջ հանդիպող և կիրառվող համարժեք եզրույթը ոչ միշտ է ամբողջությամբ արտացոլում նույն իմաստն ու բովանդակությունը: Բացի այդ, նշված ոչ հայեցի տերմինների կողքին հեղինակի կողմից երբեմն նշվել է նաև համարժեք հայերեն տերմինը:

Ամփոփելով ատենախոսության վերաբերյալ արված նկատառումները, անհրաժեշտ է նկատել, որ դրանք առնչվում են հիմնականում գիտական բանավեճի շրջանակներին կամ ունեն խմբագրական թերություններն ընդգծելու բնույթ և չեն նսեմացնում հետազոտության գիտագործնական արժեքը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը, ինչպես նաև պաշտպանության ներկայացված հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված մենագրությունում, Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի համապատասխան ցանկում ընդգրկված գիտահետազոտական ամսագրերում տպագրված յոթ գիտական հոդվածներում,

ինչպես նաև՝ սեղմագրում: Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Հաշվի առնելով ատենախոսության վերաբերյալ վերոնշյալ նկատառումները, անհրաժեշտ է նշել, որ Վիրաբ Ալբերտի Վարդանյանի՝ «Մեղքի և պատժի համաչափության սկզբունքների սահմանադրականացման հիմնախնդիրները սահմանադրական նոր կարգավորումների և եվրոպական իրավական չափորոշիչների համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով՝ թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակը, մեր կարծիքով, արժանի է ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ ***Ա.Գ. Վաղարշյան***

08 հոկտեմբերի 2021 թ.

Իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ա.Գ. Վաղարշյանի ստորագրությունը
հաստատում եմ՝

Ա. Հովսեփյան